ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Սամսոնյան.

Ի պատասխան Ձեր՝ 15.02.2018թ. հ.7/Ե-37 գրության, տեղեկացվում է.

Երևան քաղաքում հեղեղատար ցանցի վերակառուցման խնդիր ունի Մաշտոցի պողոտայի և Գր. Լուսավորչի փողոցի հատման հատվածը, որն էլ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից վերակառուցվում է՝ հորդառատ անձրևներից հետո ջրի կուտակումներից խուսափելու նպատակով:

Ինչ վերաբերում է այն փողոցների և թաղամասերի հասցեների տրամադրմանը, որտեղ բացակայում է կոյուղատար համակարգը, տեղեկացվում է, որ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի աշխատակիցների կողմից իրականացվում են գույքագրման աշխատանքներ, որի ավարտից հետո Ձեզ լրացուցիչ կտեղեկացվի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ